ՀՀ ԿԳՄՄՆ

«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ

Հաստատում եմ

ԵՊՏՔ Տնօրինական խորհրդի

նախագահ Ք. Աբրահամյան

« 09 » 01 2024 թ.

_____

(ստորագրություն)

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Քոլեջում մասնագետների պատրաստմանն ուղղված գործունեությունը նպաստում է ուսանողների անձի ստեղծագործական, հոգևոր և ֆիզիկական հնարավորությունների զարգացմանը, բարոյականությանը, առողջ կենսակերպի ամուր հիմքերի ձևավորմանը:

1.2 Ուսանողների կարիքների վերհանումը Քոլեջի առաջնահերթություններից մեկն է, որի իրականացման համար կազմակերպվում են մի շարք միջոցառումներ, հարցումներ, անհատական զրույցներ ուսանողների հետ, աշխատանք ուսանողական խորհրդի հետ, տեղեկատվության, խորհրդատվության տրամադրում և այլն:

2. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

2.1 Ուսանողներն ընդգրկված են Քոլեջի Կառավարման խորհրդում, որը հնարավորություն է տալիս մասնակցելու հարցերի ու խնդիրների քննարկման գործընթացին և նպաստելու ուսանողակենտրոն որոշումների կայացմանը:

2.2 Տնօրինության և ուսանողների միջև հաճախակի կազմակերպվում են առկա խնդիրների վերաբերյալ հանդիպումներ և քննարկումներ՝ անմիջական և անարգել:

2.3 Քոլեջում իրականացվում են հարցումներ, որոնք նպաստում են պարզել ուսանողների խնդիրները, տարված աշխատանքների արդյունքներից գոհունակության աստիճանը, ինչպես նաև վեր հանել ուսանողների բողոքները, կարծիքները և առաջարկները: Ի հայտ եկած խնդիրները, ըստ հարցի բովանդակության, քննարկվում են համապատասխան ստորաբաժանումներում և ձեռնարկվում են համապատասխան քայլեր:

2.4 Ուսանողների կարիքների վերհանումը իրականացվում է նաև կուրսղեկների կողմից: Անց են կացվում կուրսղեկի դասաժամեր, որի ընթացքում կուրսղեկը

կազմակերպում է խորհրդատվություններ, դաստիարակչական բազմաբնույթ հարցերի քննարկումներ, հրավիրվում են ծնողական ժողովներ:

2.5 Քոլեջի Կարիերայի կենտրոնի կողմից կենտրոնի պատասխանատուն պարբերաբար անցկացնում է կարիերայի ուղղորդմանն ուղղված խորհրդատվություններ, դասընթացներ ուսանողների, շրջանավարտների, դիմորդների համար, կազմակերպվում են այցելություններ գործատուների մոտ:

2.6 Քոլեջում վերլուծվում և վերհանվում են խնդրահարույց ուսանողների հարցերը (ցածր առաջադիմություն, ֆինանսական անապահովվածություն և այլն), պարզում հեռացումների, վերականգնումների պատճառները և առաջարկվում են խնդիրների լուծման տարբերակներ:

2.7 Քոլեջը մշտապես վերանայում է իր քաղաքականությունը՝ ուսանողների կարիքներին և պահանջներին համապատասխան:

2.8 Դասապրոցեսի ավարտից հետո Քոլեջն իր ռեսուրսները տրամադրում է ուսանողներին (համակարգչային լսարան, գրադարան):